

Սալմիք	Գլանածե քառակուսի ձող մը	Տուփա	Ջուհակի սանտրը բռնող 2 լայն տախտակ
Սառատ	Սոշոր աչքերով մաղ	Տրտույ	Շատախօսել
Սատակ	Լիկած, թոյլ-ծոյլ	Յախ	Թուփ, ճիւղ որմէ աւել կը շինեն
Սեղան	Միակտուր տախտակէ սինի, թիղ մը բարձր Բանի տեղ դնել	Յախտակ	Յախերով շինուած Մաքրել, ցողուել
Սեպել	Տէրտէրի կամ վարդապետի գլուխ Բարակ կաշի	Յղուել	
Սել կլոխ	Սիսեռ	Փալախ	Գիրուկ
Սէկ	Սիւնը	Փեմիդ	Ուսիդ
Սըսեռ	Երեսը պատուած	Փետատ	Բրիչ
Սիմը	Վհատիլ, ընկրկիլ	Փէտ	Փայտ
Սկըրքած		Փիմքի	Թափթփած, փնթի
Սփիկ		Փքտուխ	Պլուլիս, փաթթուիս
Վերեցալ	Թափուկցալ	Փոխնորտ	Սլատտին փոխարինող մաքուր լաթը
Վէր	Վար	Փոք	Կարի մէջ ծալք
Վլալ	Լուալ	Փուխ	Փխրուն
Տախտեղ	Սէւ պղպեղ	Քաղցասկրիլ	Երկար հիւանդութենէ ետք «ոսկորներու անօթութիւն»
Տառապա	Քանութի բեղկերը	Քարս	Քաղցր, անուշ
Տառծէկ	Գերան, առաստաղի	Քեկէն	Կակաղող
Տավար	Հօտ, դուար	Քքուիլ	Ոջիլ փնտուել
Տեմէր	Տանիք	Քիբ	Քոյր
Տերիկ	Դարակ	Քիւննի	Սուսամ, կնճիթ
Տերվէր	Դէպի վար	Քշտել	Չարնել, ծեծել
Տէվ	Դեւ, սատանայ, ոգի	Քուռակ	Մատակ, անասունի ձագ
Տէրընտաս	Տեառընթառաջ	Օշխար	Ոշխար
Տէրի	Տարի	Օջլոտը	Ոջլոտը
Տըտիկ ընել	Նստիլ, մնալ		
Տըփալ	Շատ ուտելէն տքալ		
Տիրուկ-տիրուկ	Ուզածին պէս խօսիլ		
Տնագն էնել	Ծաղրել, հեղնել		
Տուտում	Դղում		
Տրած իմ	Կ'ապրիմ, ողջ եմ		

ԿԱՊԱԴՈՎԿԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Նկատելով որ Թողաուր եւ Սերաստիան կապաղովեան շրջանին մէջ կը նկատուէին, Հր. Աճառեան Կեսարիոյ շրջանի հայերէնի եւ Արարկիրի, Տիվ-րիկի, Կիւրիւնի, Տարէնտէի բարբառներուն միջեւ կը գտնէ հասարակաց գծեր(1) : Ըստ այս տեսութեան Արարկիրի բարբառը՝ որուն մէկ երկու բար-

1) Հր. Աճառեան, «Հայ Բարբառագիտութիւն», Էմիսեան ազգագրական ժողովածու, հատոր, Բ. 1911, էջ 215 :

բառն է Կեսարիոյ բարբառը, ունի 7 ձայնաւոր, ա, m (2), է, ը, ի, օ, ու, բաղաձայնները սնին երեք աստիճան, քրքրում, քրքրում շնչաւար եւ քաւ: (3)

Հին հայերէնը կը ճանչնար երեք աստիճանի բաղաձայներ, քրքրում խալ(4) եւ քաւ: (5) Թաւ բաղաձայններու խումբը դրեթէ ամէն տեղ անփոփոխ պահուած է, սակայն թրթուռն եւ խուլ բաղաձայններու խումբը ըագմաթիւ բարբառներու մէջ իր դերը փոխած կամ փոխանակած է: Բարբառներէն քանի մը հատը՝ ինչպէս Արաբկիւրիները, իր յարակիցներով կը ներկայացնէ բաղաձայններու բոլորովին նոր խումբ մը, որ կը կոչուի շնչաւոր թրթուռն բաղաձայններ, որոնք են՝ բ, դ, ղ, ձ, ջ, որոնք լատինական այբուբենով կը նշանակուին bh, gh, lh, եւայլն եւ կը ծագին զրաբարի բ, դ, ղ, ձ, ջ ձայներէն (Հր. Աճառեան, «Հայ բարբառագիտութիւն», էջ 17):

Հր. Աճառեան դիտել կու տայ թէ իր Արաբկիւրի բարբառին տակ խմբաւորած բարբառները երկու մեծ ճիւղերու կը բաժնուին: Առաջին ճիւղին կը պատկանին Արաբկիւրի բարբառն ու Տիվրիկի ենթաբարբառը, իսկ երկրորդին կը պատկանին Կիւրիւնի, Տարէնտէի եւ Կեսարիոյ ենթաբարբառները:

Այս վերջին ճիւղին հիմնական տարբերութիւնը այն է, որ բաղաձայններուն մէջէն թրթուռն շնչաւորներու խումբը ամբողջապէս կը պակսի: Նմանապէս մինչդեռ Արաբկիւրի բարբառը այ երկբարբառը կը վերածէ աի, Կիւրիւնի եւ միւս ենթաբարբառները կը դարձնեն զայն էի (Հայ բարբառագիտութիւն, էջ 216):

Երկու ճիւղերուն եւ անոնց ենթաբարբառներուն ընդհանուր յատկանիշները հետեւեալներն են.—

1.— Գործիականի մասնիկն է of (փոխանակ ովի), օրինակ՝ á'noſ կամ ábnfof = ձեռքով, խօսելով եւայլն:

2.— Սահմանադրական ներկայի եւ անկատարի մասնիկներն են՝ գա, գօ, գու. ասոնք կը զրուին բայէն առաջ կամ յետոյ եւ ձայնաւորով սկսող բայերուն քով կը կրկնուին. ինչպէս՝ Արաբկիւրի բարբառին մէջ՝ դրգու գու (= կը զրկէ), գբսա գու (= կ'ըսէ), գեքա գու (= կ'երթայ), Կիւրիւնի բարբառին մէջ՝ դօ խըխտես (= կը խեղդես), գօ գերքամ (= կ'երթամ), գուդէ գօ (= կ'ուտէ), Տարէնտէի բարբառին մէջ՝ գա գրքքամ (= կ'երթամ), գու գուտէն (= կ'ուտեն), «Հայ բարբառագիտութիւն», էջ 216, Հր. Աճառեան):

«Թէ ձայնակամ փոփոխութեանց եւ թէ ֆերականական կազմութեան մէջ Արաբկիւրի բարբառը նոր երեւոյթներ չ'ընծայեր եւ կրնամք ըսել թէ առհասարակ եիմ հայերէնի հաւատարիմ բարբառ մըն է, մանաւանդ երբ գայն համեմատենք Կիլիկիոյ բարբառին հետ»: (Հր. Աճառեան, «Հայ բարբառագիտութիւն» էջ 216):

2) Երջուած ա տառը նշանակն է աի եւ էի միջեւ ձայնիմ, որ լեզուաբանները այդպէս նշանակել յարմար դատած են (Հայ բարբառագիտութիւն, Հր. Աճառեան, էջ 9):

3) Թրքրումն բաղաձայններ են բ, դ, ղ, ջ եւայլն:

4) Խուլ բաղաձայններ են՝ ս, կ, տ, ծ, ճ եւայլն:

5) Թաւ բաղաձայններ են՝ փ, ք, թ, ց, զ եւայլն: